

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 36

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

24.12.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ն.Ասրյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ն.Մանուկյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Հ.Հակոբյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Ադիլյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ. Խանզադյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա. Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ս.Սարուխանյանին, Ա.Հովսեփյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Անհրաժեշտ քննարկումներ կազմակերպել սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակ ունեցող համայնքների ղեկավարների հետ տարեկան պլանային ցուցանիշները ապահովելու նպատակով, ցուցաբերել մեթոդական աջակցություն վերջիններիս կողմից մեծ ապառքներ ունեցող անձանց նկատմամբ՝ դատական և այլ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վերադասի կողմից տրված հանձնարարականների սահմանված կարգով և ժամկետներում կատարելու ուղղությամբ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Եռօրյա ժամկետում քննարկել և ներկայացնել առաջարկություններ ու տեղեկատվություն նախատեսվող բիզնես-ֆորումի ծրագրերի վերաբերյալ:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/